ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ

28 հոկտեմբերի 2022թ. **ք. Երևան**

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը 2022թ. հոկտեմբերի 28-ի նիստում քննարկեց դատախազների թեկնածությունների ցուցակում, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված Վ. Ա.-ի՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնին նշանակելու վերաբերյալ եզրակացություն տալու մասին ՀՀ գլխավոր դատախազի առաջարկությունը:

Հաշվի առնելով Վ. Ա.-ի անձնական և մասնագիտական որակները և ղեկավարվելով ՀՀ գլխավոր դատախազի՝ 2018 թվականի ապրիլի 27-ի թիվ 45 հրամանով սահմանված հավելվածի 7-րդ կետի 13-րդ ենթակետով՝ **Հանձնաժողովը** բաց քվեարկությամբ միաձայն՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

Դրական եզրակացություն ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ Վ. Ա.-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնին նշանակելու վերաբերյալ: